ւանը պատմական յիշատակ չէ միայն, նա թաղնուած տենդ է, կենդանի մսերի սարսուռ, նրբագին երաժշտական գործիք, որի լարերի վրայ ահա այսօր գարունը իր վարդագոյն մատերն է փռում եւ հին դինու նման ժայռերի երակները վառում:

Ո՞վ է մեղաւոր, եթէ բուրումների մէջ կորած մեր կուրացած աչքերը այլեւս ծաղիկները չեն տեսնում: Այն ծաղիկները, որոնցով աբարողական ձեռքը օծում է պարզահոգիների եւ մանուկների ճակատը, որպէսզի նրանք արժանանան մշտնջենական կենդանի մարմնի եւ արիւնի հաղորդումի, եւ ճակատը դեղնած դիակների, որպէսզի մահը լինի բուրումնաւէտ եւ յարութիւնը վստահ:

Հայաստանի որոշ վայրերը ու մանաւանդ Սեւանը հասկանալու համար, պէտք է գտնել խորհուրդների բանալին: Աղքատիկ եւ պարզուկ այս գրքի մէջ եթէ մէկը ծածկածածուկ նշանները չգտնի՝ ոչինչ չի կարող հասկանալ: Երբ ծերունի Գեօտէն հասաւ Սիկիլիա եւ կանգ առաւ Ջիրջենտիի մօտ, նա արձանագրեց. «Այստեղ է բանալին ամենայն բանի»: Այդ ամենայն բանը՝ Հելլադան էր եւ իր մշակոյթը: Բայց Գեօտէն, որի մայրը, ըստ արդի գերմանացի ցեղաբաններին, իր երակների մէջ հայկական արիւն էր կրում, Գեօտէն մոռանում էր, որ իր բանալին բաց էր արել միայն Թիրենեան ծովի մութ կապոյտ դուռը, դէպի Պրաքսիթէլ եւ Հոմերոս տանող արեւային երկիրը եւ որ այնտեղ, հեռում, կայ մի աշխարհ, աւելի բարդ ու աւելի խորհրդաւոր, որտեղից — ասում են ուրիշ արդի հետազօտողներ — Լեօնարդօ Դա Վինչին վերադարձել էր նոր խոհերով լեցուն եւ վառուած աչքերով:

Հայաստանի բանալին թաղնուած է հազար չերտերի տակ, բայց ով որ գտնի՝ կարող է բոլո՛ր դռները բանալ: Արեւմուտքի եւ Արեւելքի:

Այստեղ է բանալին ամենայն բանի:

Սեւանը մօտ է բոլոր աշխարհներին, որովհետեւ նա բարձրաբարձր հոգեկան կայան է, որտեղ կուտակւում են հիւսիսից եւ հարաւից, վերից եւ վարից եկող բոլոր հոսանքները եւ որտեղից աննշմարելի հոգեկան հոսանքներ են անցնում դէպի աշխարհիս ճակատագիրը կանոնաւորող վայրերը:

Աչքերս վրաս եմ փակում եւ ամբողջ լարուած կեանքով լսում եմ: Այստեղ տեսանողը միայն կարող է տեսնել եւ միայն նա կարող է լսել ներքին աշխարհների լուսաձայն ռադիօն:

Ամէն ինչ համատիեզերական է եւ արարողական:

Ձայն, գոյն լոյս՝ խառնուած: Պատարագ՝ լերան գագաթի վրայ ասուած, աշխարհի չորս կողմից եկած ձայներով: Ու արեւը արծաթէ պատմուճան է հայկական բարձրաւանդակի վրայ ձգուած, լիճը աւազան է, ուր կնքւում են գարուն եւ ձմեռ, ե՛ւ աշնան դեղին մելամաղձութիւնը, ե՛ւ գարնան աւետաբեր ու բերկրալի պարը:

Լիճը... Հոռմայ բլուրների մօտ փռուած կապոյտ աւազանի մէջ մարդիկ որոնում են դարեր առաջ խորտակուած՝ Կեսարների մեծափարթամ նաւը: Բրոնզով եւ ոսկիներով քանդակուած պատմական այն յիշատակը, որի վրայ գինին, կինը եւ հեշտանքը մեղմ երգանքի խարոյկներ են վառած: Մարդիկ նայում են շլացած աչքերով եւ նաւի քանդակուած բեկորների առջեւ մերկացած կանանց սարսռող եւ հմայիչ ստուերներն են տեսնում:

Այստեղ, Սեւանայ լիճի մէջ, առայժմ միայն երկինքն է խորտակուել, որովհետեւ հայ ոգին կորցրել է իր բանալին:

Կորցրել է իր բանալին եւ փսթփսթացնող աժան մօթօրի եռեւիցն է վազում: Վանքից փախած արեղայի կամ, ճեմարանի ննջարանում, սեռային երգանքից այլասերուած աշակերտի գլխում ջուր կտրած աստուածներ է որոնում, «նոր» աստուածներ: Ու այն էլ, այստեղ, քարացած մումիայի մարմնով, ճըգնաւորի ոսկրացած կրծքի նման թշուառ այս վայրում...

Հայաստանեայց Առաքելական այս կայանը չունի Կեսարների եւ Աղեքսանդր Բօրջիաների շքեղազարդ, հզօր եւ շուայտ պալատների յիշատակը. նրա թագը Մաշթոցի քարայրն է եւ կիսախարխուլ մատուռը, որի սեղանի վրայ մոմի եւ արիւնի հետքեր կան: Այստեղ, աղը չրթունքներին կպած, կանգ է առնում

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան